# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 17

«18» 02 2020թ. գ. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆայել Ալեքսանդրի Խաչատրյանին Կոտայքի մարզի դատախազի պաշտոնից ազատելու և Սևակ Ալֆրեդի Հովհաննիսյանին նույն պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար՝ 17.02.2020թ. N 39-Ա և 42-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Կատարել Ռ.Խաչատրյանի կողմից՝ Կոտայքի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Ս.Հովհաննիսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Հարությունյան Արմեն - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Գասպարյան Արման - Կոտայքի մարզի դատախազի տեղակալ

| | |
|---|---|
| Մարտիրոսյան Հայկ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |
| Աբաջյան Արուսյակ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ |
| Խալաթյան Նաիրա - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |
| Բաղդասարյան Լևոն - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Սարգսյան Նելլի - | Կոտայքի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի մարտի 9-ը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,**
**ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ**
**ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝** **Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**